ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 266- Ա

23 հուլիսի 2019 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնների 2-րդ ենթախմբի, գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող և «Ներքին աուդիտ» բաժնի քաղաքացիական ծառայողներին 2019 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունների հիման վրա տալ դրամական պարգևատրում՝ համաձայն կից հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ պարգևատրման հաշվարկը կատարել հիմք ընդունելով քաղաքացիական ծառայողների հաշվետվությունների կիսամյակային գնահատականները:

23.07.2019

ՄԱՐԶՊԵՏ

Digitally signed by SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ